

Զ Ե Կ Ո Յ Ց

ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

1971 - 72 ՏԱՐԵՇՐԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԿԱՆ ԿՐԹԱՌՈՇԱԿՆԵՐ

1. Գալուստ Կիլպենկեան Հիմնարկութիւնը 1971-72 ուսումնական տարեշրջանին համար, վերանորոգելի նախկին կրթաթուղակներէն զատ, պիտի յատկացնէ նաեւ որոշ թիւով նոր կրթաթուղակներ արժանաւոր հայ ուսանողներու:

2. Հիմնարկութեան ներկայ ծրագրերը կը վերաբերին միայն այն ուսանողներուն՝ որոնք համալսարանական լրիւ մակարդակ ունեցող ուսումնական հաստատութեան մը մէջ կը փափաքին կանոնաւորաբար հետեւիլ մասնագիտութեան մը: Գիշերային, մասնակի կամ ոչ-ակադեմիական դասընթացքներ մաս չեն կազմեր ներկայ ծրագրին:

3. Կրթաթուղակներու յատկացումը կը կատարուի բնարութեամբ, հայկական ծագում ունեցող ուսանողներու՝ որոնք իրենց բնակավայրին եւ կամ այլ երկրի մը կրթական հաստատութիւններէն մէկուն մէջ բարձրագոյն ուսման հետեւելու համար զուրկ են նիւթական անհրաժեշտ միջոցներէն: Սկզբունքով Հիմնարկութիւնը չի հովանաւորեր ուսանողներ՝ որոնք իրենց ուսման կ'ուզեն հետեւիլ հեռաւոր երկիրներու համալսարաններուն մէջ: Շատ բացառիկ պարագայներու տակ է միայն որ կրթաթուղակներ կրնան տրամադրուիլ այս վերջիններուն՝ եթէ նախընտրուած մասնագիտութեան կարելի չէ հետեւիլ տեղական համալսարանի մը մէջ:

4. Թեկնածուներ պարտին ունենալ ուսումնական բարձր մակարդակ, լրացնել անհրաժեշտ բոլոր պայմանները եւ ընդունուած ըլլալ նուազագոյն շրջանորոշ դասարանը տնօրէնական համալսարաններու մէջ՝ կամ համապատասխան դասարան մը այլ համալսարաններու պարագային:

5. Կրթաթուղակներու Բանձնախումբը ներկայացող թեկնածուներէն կ'ընտրէ իւր գաղափարութեամբ արժանաւորագոյն նկատուածները միայն:

6. Միեւնոյն բնասելիքին պատկանող երկու սեղաններ միաժամանակ չեն կրնար օգտուիլ Հիմնարկութեան ներկայ ծրագրէն, եւ նախընտրութիւնը կը տրուի արժանաւոր այն ուսանողներուն՝ որոնց բնասելիքն անմիջական պարտական է օգտուող չէ կրած անցեալին Հիմնարկութեան համալսարանական կրթաթուղակներէն:

7. Թեկնածուները իրենց ձեռագիր դիմումագրերը պէտք է ներկայացուցած ըլլան ստորեւ նշանակուած հասցէներէն մէկուն՝ պարագային համաձայն՝ ամենէն ուշ մինչեւ 31 Մայիս, 1971, (Հարուային Ամերիկայի երկիրներուն թիւղէս նաեւ Աւստրալիոյ համար այս թուականը պիտի ըլլայ 15 Դեկտեմբեր 1971): Ի պատասխան՝ թեկնածուներուն կը զրկուին հարկ եղած տեղեկութիւններն ու հարցաթերթիկները:

8. Շփոթութիւններ կանխելու համար, դիմողները պարտին իրենց անունն ու մականունը թղթակցութեան եւ հարցաթերթիկներուն մէջ գլխի միօրինակ ձեւով, այնպէս ինչպէս կ'երեւին անոնք եմթագային թղթակցութեան կամ անցագրին մէջ:

9. Հիմնարկութիւնը սահմանափակ թիւով կրթաթուղակներու համար նկատի պիտի ունենայ նաեւ դիմումներ թեկնածուներէ՝ որոնք աւղղէն տիրացած են համալսարանական վկայականի մը եւ կը փափաքին կատարելագործել իրենց ուսումը իրենց բնակած երկրին կամ արտասահմանի ուսումնական բարձրագոյն հաստատութիւններէն մէկուն մէջ: Նախընտրութիւն պիտի տրուի արժանաւորագոյն թեկնածուներէն անոնց՝ որոնք նախապէս բնաւ չեն օգտուած Հիմնարկութեան կրթաթուղակներէն: Դիմումները պէտք է կատարուին վերոյիշեալ ձևով զարմեալ, նկատի ունենալով նոյն պայմանաժամերը:

10. Ներկայացուած բոլոր թղթածրարները ի վերջոյ կը կեդրոնացուին Լիզպոն՝ ուր Հիմնարկութեան Կրթաթուղակներու Բանձնախումբը իր վերջնական ուղղումները կու տայ Օղոստոս-Սեպտեմբեր ամիսներու ընթացքին (Հարուային Ամերիկայի երկիրներուն եւ Աւստրալիոյ պարագային՝ Փետրուարի վերջը): Բանձնախումբին որոշումները թեկնածուներուն կը հաղորդուին ուղղակի Լիզպոնի Կեդրոնէն:

11. Անհրաժեշտ հարցարանները ստանալու համար գիմումները պէտք է ներկայացնել հետեւեալ հասցէներուն.

ա.— Լիբանան բնակող քեկնածուներ՝

Educational Committee of the Calouste Gulbenkian Foundation in Lebanon,
Stephen Building,
Riad Solh Street,
BEIRUT — LEBANON.

բ.— Ֆրանսա բնակող քեկնածուներ՝

Service Armenien des Bourses d'Etudes Fondation Calouste Gulbenkian,
51, Avenue d'Iena,
PARIS XVIIe — FRANCE.

գ.— Անգլիա բնակող քեկնածուներ՝

Calouste Gulbenkian Foundation
U. K. & British Commonwealth Branch,
98 Portland Place,
LONDON WIN 4ET — ENGLAND.

դ.— Վերոյիշեալներէն տարբեր երկրներ բնակող քեկնածուներ, ինչ ալ ըլլայ իրենց պատակութիւնը, պէտք է գիմեն ուղղակի Հիմնադրութեան կեդրոնին, հետեւեալ հասցէով.

Calouste Gulbenkian Foundation
Department of Armenian Affairs,
Avenida de Berna,
LISBON-1 — PORTUGAL.

12. Ներկայ ուսումնական տարեշրջանին Հիմնադրութենէն համայնարանական կրթաթոշակ ստացող ուսանողներ իշնոց կրթաթոշակները 1971-72 տարեշրջանին վերանորոգելու տալու համար պարտին իրենց գիմումները յղել ուղղակի Հիմնադրութեան կեդրոնին, Մարտ 1-էն ժինչև. Մայիս 31, 1971 (Հարուայի Ամերիկայի երկրորդութուն ինչպէս նաև Աստաթայի համար՝ Սկստեմբեր 15-էն ժինչև. 15 Դեկտեմբեր 1971) ստանալու համար հարկ եղած հարցաթերթիկները, նշանակուած պայմանաժամերը չյարգող ուսանողներու գիմումները նկատի չեն առնուիր:

ԳԱՆՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Լիպպոն, 1 Մարտ, 1971